

## Տեղեկատվություն

### 2012թ. I կիսամյակում տնտեսական համագործակցության հարցերով հայ-ուկրաինական միջկառավարական համատեղ հանձնաժողովի գործունեության շրջանակներում ՀՀ Տավուշի մարզի և Ուկրաինայի վարչատարածքային միավորների միջև փոխգործակցության վերաբերյալ

Թիվ	Համագործակցություն	Տարեթիվ	Ընթացիկ վիճակ
1.	<p>Օծվել է և մեծ շուքով բացվել Իջևանի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին, որի հանդիսավոր բացման կապակցությամբ Իջևան էին ժամանել բազմաթիվ հյուրեր Ուկրաինայից:</p>	<p>26 մայիսի, 2012թ.</p>	<p>2012թ. մայիսի 26-ին օծվել է և մեծ շուքով բացվել Իջևանի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին: Այն կառուցվել է նախկին եկեղեցու վայրում և կրում է նույն անունը: Սուրբ Ամենափրկիչի շինարարությունը նախաձեռնել ու հովանավորել են Իջևանցի, այժմ Ուկրաինայում բնակվող գործարար Անդրանիկ Ղազարյանն ու նրա եղբայրներ Ֆրունզ և Պետրոս Ղազարյանները: Հանդիսավոր բացման կապակցությամբ Իջևան էին ժամանել բազմաթիվ հյուրեր Ուկրաինայից, մարզի համայնքներից և տարբեր եկրներում բնակվող Իջևանցիներ: Եկեղեցին օծվել Ուկրաինայի թեմի առաջնորդ Տեր Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանի և Տավուշի թեմի առաջնորդ Տեր Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանի ձեռամբ: Տեր Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանը Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից Ղազարյան եղբայրներին է հանձնել հայ եկեղեցու բարձրագույն պարզևը՝ «Գրիգոր Լուսավորիչ» շքանշանը: ՀՀ Տավուշի մարզպետի կողմից բարեգործներին շնորհվել է «Պատվավոր տավուշցի» կոչումը:</p>
2.	<p>Հայաստանի Հանրապետությունում Ուկրաինայի արտակարգ և լիազոր դեսպան Իվան Կուխտայի այցը Տավուշի մարզ</p>	<p>31 մայիսի, 2012թ.</p>	<p>2012թ. մայիսի 31-ին Տավուշի մարզպետարանում, մարզպետ Արմեն Ղուլարյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Ուկրաինայի արտակարգ և լիազոր դեսպան Իվան Կուխտային:</p> <p>Մարզպետը ներկայացրել է մարզն իր տնտեսության ճյուղերով, զարգացման հեռանկարներով: Համաձայն ձեռքբերված դեռևս 2009 թվականին ստորագրված համագործակցության պայմանագրերի (Ուկրաինայի Չերկասսիի և Խարկովի մարզերի միջև)՝ դեսպանի աջակցությամբ առավել գործուն դարձնել, դնել գործնական ու ակտիվ հիմքերի վրա:</p>

			<p>Ուկրաինայի դեսպանի կարծիքով հնարավոր է կազմակերպել բազմաթիվ միջոցառումներ, այդ թվում՝ բիզնես-ֆորումներ, մշակութային հանդիպումներ միջտարածաշրջանային մակարդակում, պետք է բարձրացնել առևտրաշրջանառությունը, սերտացնել երկու երկրների, նամանավանդ միջոցառնալ շրջանակներում, երիտասարդների միջև կապը, որի կապակցությամբ հարկավոր է մշակել որոշակի ծրագրեր, զարգացնել տուրիզմը:</p> <p>2012թ. Երևանում կանցկացվի հայ-ուկրաինական միջկառավարական հանձնաժողովի նիստ, որտեղ կքննարկվեն կատարված աշխատանքները, կնախանշվեն երկկողմ հարաբերություններում հետագայի քայլերը:</p> <p>Հանդիպումից հետո հյուրերը եղել են Իջևանի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցում:</p>
--	--	--	--